

այս գեղս . բայց տեղը վաճառականու-
թեան յարմար երևելուն համար՝ Հայ-
կայ որդիքն եկած են , և խարայելի որ-
դւոյ ինչուան ցլետինն ալ վաճառած են
անտի :

Ճամբայ ըրած ատենս , միանգամայն
ալ կը դիտեմ զարմացմամբ թէ ինչ-
պէս բերրի և զօրաւոր է այս կախածա-
կան երկիրն : Ամեն կողմ կը փայլին օ-
րուան լուսոյն առջև վայրենի ծաղկուն-
քն իրենց հիանալի պսակօք . վարդն ,
եղրնանին (lilas) և մանուշակն կը մծ-
նան մրտավարդի (rhododendron) , լեռ-
նավարդի (azalée) և հարսնուկին քով-
ցողաբարձ խոտն և յորդառատ որթա-
տունկն մի և նոյն հողոյ կոշտէն կ'եւ-
նեն : Ափսոս որ այն տեղն ուր վրա-
ստանի երկիրն կրկին ճոխութիւն և
չքեղութիւն ստացած է , հօն հազոր-
դակցութեան միջոցներն՝ որ արդէն
Տփղիսէն սկսեալ խեղճ են , ևս առաւել
զգալի կը լինին : Այս գծիս վրայ հե-

ռագրական վերջին թեղն կը լիննայ 'ի
Սղնախ . անկէ անդին թղթատարական
ծառայութիւնն շարաթիւն երկու անգամ
մինտկ կը բանի : Դարձեալ որ և իցէ
մարդ որու բնակութիւնն քիչ մը հեռու
զատուած ըլլայ , պէտք է առանձին զը-
րուցատարներ ունենայ , վասն զի եւ-
խելթի մէջ գիւղական թղթաբաշխն
բնաւ իսկ անծանօթ է :

Ճամբաներն , մանաւանդ ձմեռ ատեն ,
այնպէս անպիտան են , որ պոռպոռք մը
գինի բեռցուցած արաւայ մը հաղիւ
կրնայ քալել . ասկէց յառաջ՝ կու գայ
որ գէշ օդերով փոխադրութիւնք կրկին
արժէք ունին . կան անցք՝ որպիսի է
Գամպրի¹ կամ կուրճիանի լեռանց անց-
քն , որոնք այն ատեններն բոլորովին
անգնալի են . պէտք է յանձն առնուլ
երկայն շրջաններ ընելու , որոնք կառ-
քին գինը կը տառնապատկին (յի-
սուն կամ վաթսուն ռուպլ վեց գոմէշ-
ներով լծուած արաւայի մը համար) :

¹ Իմ 1881ի նոյեմբերի մէջ անցած ժամա-
նակս նոր ճամբայ մը կը շինուէր . ասոր վրայ խօ-

սելու առիթ պիտի ունենամ . քիչ մը վերջը :

Կը շարունակուի .

ՄԱՐՄԱՇԻՆՈՒ ԵԿԵՂԵՑԻՈՑ ԿՈՐԾԱՆՈՒՄ.


Ինչպէս կ'ողբար տարի մ'առաջ մեր
ՇԻՐԱԿԱՑ ՏԵՂԱԳՐՈՒԹԵԱՆ հեղինակն
յառաջաբանին մէջ , լսելով Անուոյ Միջ-
նաշտարակին բոլորովին կործանումը՝
մատենին տպագրութեան աւարտելուն
ժամանակ , նոյնպէս այս վերջերս նմա-
նօրինակ գէպք մը , հանգիպեալ 'ի
Մարմաշէն , կու գայ ամայացեալն Հա-
յաստանի երեսաց տխրութիւնը աւել-
ցընելու , ինչպէս ամենայն հայրենա-
սէր սերնդոց : Յաւիտենից կը ննջեն
անոնք որ զայնս կանգնեցին , և աւաղ,
որ զարդիս կարեկիր ձեռք մը չկայ ,
որ ժամանակին հետ կուռի , և կեր-
պով մը կարկատէ պահէ զայնս , որոնք

անտարակոյս առ 'ի նախնեաց մեզ
մնացեալ հին դպրութեան հետ կը յի-
շեցընեն ոչ անփառունակ անցեալ մը...

Նոր կործանածն է եկեղեցի մը 'ի
Շիրակ գաւառի , անուանի Մարմաշի-
նու վանաց հիւսիսակողման եկեղեցին ,
որ հանդիպէր է այս տարուոյս ապրիլի
4ին (ըստ հին տոմարի) : Ուզելով ման-
րամասն տեղեկութիւն մը տալ ընթեր-
ցողաց , քաղելով կը թարգմանենք հօս
ՇԻՐԱԿ ՏԵՂԱԳՐՈՒԹԵԱՆէն այս վանքիս
և անոր եկեղեցեաց և մատրանց ծա-
նօթութիւնքը , առանց արձանագրու-
թեանց , որոց փափազողք կրնան գի-
մել նոյն մատենին :

« Երկու Ղանդեա գիւղից յարակից
մերձաւորութիւնն, անոնց քով գետ-
անցքն, (ուր և առաջուց կամարը ձը-
գուած էր, ժԳ դարու սկիզբները յի-

շատակեալ), ալ աւելի անոնց քով
հիսիսային կողմանէ՝ կիսաւեր կիտա-
կանդուն մենաստանն, այն հռչակա-
ւոր ՄԱՐՄԱՆՃԷՆՆ, կը ցուցնեն թէ




ՄԱՐՄԱՆՃԷՆ, ՂԱՆԵՐ և ԵԿԵՂԵՑԻԷ:

նշանաւոր տեղ մ'էր հօս. այլ հիմա
հին բնակութիւնք անշրտցած են, և
Կարինու կողմերէն Հայ դաղթականք
եկած կը բնակին: Դեռ քաջանշան է

մենաստանն, հոյակապ Եկեղեցիաւն և
Պահլաւունեաց պալատաւոց շիրմար-
թէ ո՞վ է առաջին շինողն և ինչո՞ւ հա-
մար Մարմաշէն կոչուած, արդեօք Մա-

րիամ տիկնոջ մ'անուամբ, թէ Մարիմ
կամ Մարմ կոչուած մարգու մը՝ յայտ-
նի չէ. բայց Մարմարաշէն կոչումն ընդ-
ունելի չէ, ինչպէս միայն կիրակոս
Պատմիչ կը գրէ, թերեւս գրչին վրիպա-
կաւ, իբրեւ թէ մարմարին քարերով
շինուած ըլլայ, որ չէ: Շինութեան ա-
ռաջին յիշատակօրն Ասողիկ՝ խառնակ
բան մը կ'ըսէ, ինչպէս տեսանք Բզնոյ-
րի յիշատակին մէջ. իսկ արձանագիրք

և ուրիշ պատմիչք կը հաւաստեն, ու-
րոնց հետ նաեւ Սամուէլ ժամանակա-
գիրն, սկսելուն և աւարտելուն թուակա-
նին հետ մէկտեղ, եթէ, եղաւ « Սկիզ-
» բն շինելոյ մեծանուն և վայելաշէն
» զարմանակերտ և հոյակապ ուխտին
» Մարմաշինի՝ ի քրիստոսասէր իշխա-
» նաց իշխանէն վահրամայ, սկսեալ ի
» Նլէ (986), և աւարտեալ ի Նիֆ (994)
» ամին, որ լինի ութ ամ: Այլ բարե-



Մնացուած վերին վանաց Մարմաշինու:

բողոքարար աւելի ստուգողոյն վաւե-
րական գրուած մ'անշին՝ մնացեր է,
որ է երկայն և պոնծալի խօսքով նոյն
իսկ շինողէն արձանագրածն, եկեղե-
ցոյն հարաւային պատին վրայ արտա-
քուտա, որ կը ցուցնէ թէ շինութիւնն
ամենայն մասամբք քառասուն տա-
րուան մէջ աւարտեցաւ, 986-1029, —
(Կարգա Արձանագրութիւնը, էջ 148):

« Անտարակոյս անոնք որ յետայիջան
դատաակերտ եկեղեցեաց և վանորէից՝
հօս ընտրեցին իրենց յետին հանգստա-
րանը, ընչից և խնամոյ չէին խնայեր
իրաւամբք մեծաշէն և զարմանակերտ
յարդարելու զայս. որուն կը վկայէ նաեւ
կանգուն կեցած եկեղեցին, չափաւ որ
մեծութեամբ, մանաւանդ թէ փոքր,
քառակուսի, 12 մեղր երկայն, 10 լայն,

կարմրագոյն քարերով, առանց սեան վեր բռնելով խորշորոշեայ գմբէթը, չորս լուսամտիւք, արտաքուստ սիւնա- զարդ և սրանկիւն կամարներ անոնց վրայ, որով Անույ եկեղեցեաց ձևէն կը հեռանայ. երկը քանդակազարդ մեծ պատուհաններով դէպ յարեւելեան- հիւսիս և 'ի հարաւ: Սեղանն վեց մեղր երկայն և քիչ մը պակաս լայն՝ երկու կողմանէ ունի աւանդատուններ և մա- տուռներ, իւրաքանչիւրն 3 մեղր եր- կայն, 1,75 լայն, յատակքն բեմէն քիչ մը ցած, և դուռն յարեւմտից: Կիսա- բոլոր խորանին ետեւը ցած և փոքր եօթն լուսամուտը կան, կամարակապ և սիւ- նազարդ, նկարաձև քարաշար միահետ քուշ տակ: Անույ կաթողիկէին պէս ա- սոր արտաքին որմոց վրայ ալ անկիւնա- ձև գոգացեալ խորշեր կան: Ժամա- տունն գրեթէ հաւասարաչափ մեծու- թեան տաճարին՝ քայքայուած է. և կործանուած են բազմանկիւնի միա- կուր չորս սիւնքն՝ որոնք զյարկը վեր կը վերցընէին. այլ հիմայ 'ի նորեկ բնակ- չաց վեր 'ի վերոյ շինուելով, արօթից տեղ եղած է. բայց երկու կողմերէն կանգուն կը կենան երկու փոքր մա- տուռներ կամ եկեղեցիներ սրածայր գմբէթաւորք՝ կարմրագոյն քարերով կառուցած. այլ վասն զի որմոց արտա- քին երեսաց քարերը վերջի եկողներն

վերուցած են՝ կը մնան անգիր և անյի- շատակ »: — Ասոնց քով կը յիշատակէ հեղինակն գերեզմաններ և անոնց հե- տաքրքրական տապանադիրերը, զորս կամեցողն կրնայ կարգալ նոյն իրեն ճոխ մատենին մէջ ինչպէս նաև այն երկար արձանագիրն, քսան և մի տու- ղով գրուած, որ կը յայտնէ եկեղեցւոյն նորոգութիւնը շինութենէն երկու հա- ռիւր տարի վերջը (1225), Պահլաւու- նեաց զարմի պայազատաց ձեռքը: Իւ- ապա կը յաւելու:

« Գրիգորի եպիսկոպոսի արձանա- գիրն կը ցուցընէ որ այս տեղ երկու վանք կային, մին Մարմաշէն ստորա- գրածնիս՝ որ միւսոյն քով Մեճ կը կո- չուի. իսկ միւսն Վերի վանք, վասն զի քիչ մը հեռու մեծին արեւելեան հիւ- սիսային կողմն է՝ ձորոյն լանջակողման վրայ, վարինէն՝ փոքր վտակաւ բաժ- նուած, այլ աւրուած է, և միայն հիւ- սիսային որմն կանգուն կը կենայ. Սո- փիայ տիկնոջ գերեզմանն հօս էր: Այս վերին վանացս հիւսիսային կողմը քար- այր մը կայ, յորում հիմայ ևս գեղին բնակիչքը կ'ապաստանին: — Մարիա- մայ թագուհւոյն արձանագիրն կը յայտնէ մեզ Ս. Պետրոսի անուամբ ե- կեղեցի մ'ալ: Սեւան եկեղեցի կոչուած, թերեւ երկու սրագմբէթ մատուռնե- րէն մին ըլլայ »:

ԱՌԱՄԻ

Ինձ սիրելի 'ի տրտմութեան ժամն պիտի, թէ չէ՝ յուրաբութեան ժամն ամէնն են ինձ սի- րելի:

Ձուտք 'ի կաւն դնես, 'ի փոյ պատրաստ կացիր ⁽¹⁾, գձեռնդ 'ի ծակն կու տանիս, 'ի յօ- ձոյ խածանելոյ պատրաստ կացիր:

Ձինչ մարդ՝ որ ասացին թէ ճարտար է, դիւ- բաւ յակնասն ⁽²⁾ անկանէ:

Խօսքն զինչ ճաւհար ⁽³⁾ է, 'ի սաստաֆի մէջն դիր, մի ամէն տեղ ցրուել, այլ 'ի սառաֆ ⁽⁴⁾ տուր:

Ի կաքաւի կաքաւելոյն՝ երեք հարիւր ճանկ արծուոյ պատրաստ է, 'ի մէկ ծիծաղելոյն՝ եր- կու հարիւր հետ լաց:

Արեգակն որ քան զամենայն արարածս 'ի բարձր է, փոքր մի ամալ 'ի գէմն կանգնի՝ բոլորն կու խաւարի. հետ վատին քիչ նիւտ, թէ չէ՝ վատ կու դառնաս:

Ով մօտ լուսնակն նստի, երեսն նման լուսնի պայծառանայ. ով մօտ սև պտկի նստի, երեսն նման նմա լինի:

Ով շատ դատած՝ նա դատարկ ելած:

(1) Ձգուչ կաց:
(2) Գորգապիթ:

(3) ձեւ-հէր, ակն:
(4) Սեղանաւոր: